ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/104

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 22.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև ընկերություն) 28.08.2018թ. էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ներկայացրել է հայտ:

Գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն՝ ընկերությունը բոլոր չափաբաժինների գծով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները ճշտելու համար:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ընկերությունը հիշյալ օրվա դրությամբ ունեցել է 57.000 ՀՀ դրամ պարտավորություն:

«ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

Սակայն, պետք է փաստել այն հանգամանքը, որ հայտը ներկայացնելիս ընկերությունը առաջնորդվել է 28.08.2018թ. դրությամբ իր անձնական հաշվի քարտի տվյալներում առկա տեղեկատվությամբ, համաձայն որի «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն նշված օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն չի ունեցել: Ավելին ընկերությունն ունեցել է շուրջ 809.000 ՀՀ դրամ գումարի չափով գերավճար:

«ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընկերության հայտի մերժման գործընթացը՝ կայացնելով բոլոր չափաբաժինների գծով հաղթող ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Նարիբեկյանը:

2. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է ՀՀ դատական դեպարտամենտին (այսուհետ՝ նաև Պատվիրատու)՝ խնդրելով բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի կողմից լիազորված ներկայացուցիչ Զառա Աբգարյանը:

3. «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումը Բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումը գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել 24.10.2018թ. գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Դատական դեպարտամենտի կողմից կազմակերպվել է ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցում (գրասենյակային կահույքի ձեռքբերում):

Վերոհիշյալ գնանշման հարցմամբ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն, որի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից կատարվել է հարցում՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ ունենալու փաստը ճշտելու վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվել է եզրակացություն, որի համաձայն «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 57.000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն: Ըստ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի՝ նշված 57.000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունը «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ֆինանսների նախարարության 18.09.2018թ. թիվ 70-13/54713-18 գրության համաձայն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Միևնույն ժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը,

բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ավելին, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ գնման գործընթացին կարող են մասնակցել բացառապես այն անձինք, ովքեր հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ: Մինչդեռ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 57.000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն: Ընդ որում, տրված եզրակացակությունը համարվում է վերջնական, և եթե անգամ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվի, ապա Կարգի 44-րդ կետի համաձայն՝ մասնակցի հայտը պետք է մերժվի:

Գտնում ենք, որ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 57.000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորության առկայության պայմաններում մասնակցի հայտը չի կարող գնահատվել բավարար և մասնակցին չի կարող վերապահվել մասնակցության իրավունք:

Ընկերության կարծիքով, «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի չիմացությունը, չտեղեկացվածությունը, որ իր մոտ առկա է ժամկետանց պարտավորություն, չի կարող հիմք հանդիսանալ փաստելու, որ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ: Եվ եթե անգամ ժամկետանց պարտավորության առկայության վերաբերյալ չտեղեկացվածությունը հիմք է մասնակցի վարքագիծը գնահատելու և վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» չներառելու համար, ապա, մեր կարծիքով, այն չի կարող գնահատվել որպես առկա փաստի՝ ժամկետանց պարտավորության առկայության ժխտում:

Բացի այդ, «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն խնդրել է բողոքը քննող անձին պարտավորեցնել իրեն ճանաչել հաղթող մասնակից այն դեպքում, երբ նման որոշում կարող է կայացվել միայն մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատելուց հետո, իսկ տվյալ դեպքում մասնակցին այդ փաստաթղթերը ներկայացնելու պահանջ չի ներկայացվել և նշված փաստաթղթերը դեռևս չեն գնահատվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Ի լրումն 24.10.2018թ. ներկայացված գրավոր դիրքորոշմանը «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումը հայտնել է հետևյալը.

Թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/104 ծածկագրով բողոքի ընթացքում «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն պատճառաբանում է, որ հայտը ներկայացնելու օրը իր անձնական հաշվի քաղվածքը ստուգել է ՀՀ հարկային ծառայության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հարկային պարտավորություններ բաժնում, որտեղ դրոշմանիշային վճարը ներառված չի եղել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների ցանկում:

Նշված պատճառաբանության հետ կապված ներկայացնում ենք հետևյալ նկատառումները՝

1. ՀՀ հարկային ծառայության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հարկային պարտավորություններ բաժնում հարկ վճարողը զգուշացվում է հետևյալի մասին.

Հարգելի հարկ վճարող՝

Հարկային հաշվարկների ընդունման, պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներկայումս գտնվում է փորձնական գործարկման փուլում, ինչի հետ կապված Ձեր կողմից արտատպված անձնական հաշվի քարտի քաղվածքում ներառված տեղեկությունները հնարավոր է վերջնական չլինեն, որը կարող է ճշգրտվել հարկային մարմնի կողմից:

2. ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ ինքնահայտարարագրում և հարկային կարգապահություն՝ հարկ վճարողները պետք է Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկեն ու վճարեն հարկերը, վճարները:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումի լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն Արտաշես Մկչտչյանը:

4. ԳԲԽ-ԷՍ-2018/104 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 22.10.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 28.08.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 03.09.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումի (այսուհետ՝ նաև Կոնսորցիում) 24.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած գրավոր դիրքորոշումը, 28.08.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.09.2018թ. «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ին 28.08.2018թ. դրությամբ տրված թիվ 1164 տեղեկանքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.08.2018թ. տրամադրած եզրակացությունը.

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 28.08.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 7-րդ կետով որոշել է Ընթացակարգի 1-ից 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ին:

- 8-րդ կետի 1-ին ենթակետով որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցում:

- 8-րդ կետի 2-րդ ենթակետով որոշել է ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 31.08.2018թ. ներառյալ, ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.08.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ՝ 57.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 03.09.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 1-ին կետով արձանագրել է, որ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 2-րդ կետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

- 3-րդ կետով որոշել է «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.08.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (28.08.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 57.000 ՀՀ դրամ գումարի չափով: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.09.2018թ. տրված թիվ 1164 տեղեկանքում արտացոլված է, որ արձանագրված 57.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունը դրոշմանիշային վճարման գծով է: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ առկա պարտավորությունը առաջացել է 01.01.2017թ., մինչդեռ Ընկերությունը մասնակցել է մի շարք ընթացակարգերի և մինչ օրս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված որևէ տեղեկանքում ժամկետանց պարտավորություններ առկա չեն եղել: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (28.08.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ առկա չեն:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 28.08.2018թ. դրությամբ քաղվածքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 05.09.2018թ. տրված թիվ 1164 տեղեկանքը:

Որպես երրորդ կողմ ներգրավված «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից լիազորված ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ՀՀ

ֆինանսների նախարարության 18.09.2018թ. թիվ 70-13/54713-18 գրության համաձայն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ: Կոնսորցիումի ներկայացուցիչը «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից բերված այն պատճառաբանության վերաբերյալ, թե վերջինիս անձնական հաշվի քաղվածքում ներառված չի եղել դրոշմանիշային վճարը, հայտնեց, որ ՀՀ հարկային ծառայության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հարկային պարտավորություններ բաժնում հարկ վճարողը զգուշացվում է, որ անձնական հաշվի քարտի քաղվածքում ներառված տեղեկությունները հնարավոր է վերջնական չլինեն, որը կարող է ճշգրտվել հարկային մարմնի կողմից: Կոնսորցիումի ներկայացուցիչը հավելեց նաև, որ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել իրեն ճանաչել հաղթող մասնակից այն դեպքում, երբ նման որոշում կարող է կայացվել միայն մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաղթղերը գնահատելուց հետո, իսկ տվյալ դեպքում մասնակցին այդ փաստաթղթղերը ներկայացնելու պահանջ չի ներկայացվել և նշված փաստաթղթերը դեռևս չեն գնահատվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն ստացե՞լ է արդյոք ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ծանուցում դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների վերաբերյալ, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ որևէ ծանուցում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից չի ստացվել:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի՝ 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, նույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին)...:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար՝ գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.
- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.08.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (28.08.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 57.000 ՀՀ դրամ:

- «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացել:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինվճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի՝ հայտը

ներակայացնելու օրվա (28.08.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (28.08.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից 22.10.2018թ ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/40 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «ԱՐԳԱՎԱՆԴ ԿԱՀՈՒՅՔ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ